# Համաձայնագիր-2
# 19.02.2020թ. կնքված N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

**ք. Երևան** «10» դեկտեմբերի 2020թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամը, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Մ. Մուրադյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով 19.02.2020թ. կնքված N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի 7.6-րդ կետին համապատասխան՝ երկարաձգել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը 28 օրացուցային օրով:

1.2. Փոփոխել Պայմանագրի գինը և ավելացնել Պայմանագրի գումարը 19 199 580 (տասնինը միլիոն մեկ հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամով, այն սահմանելով 215 309 580 (Երկու հարյուր տասնհինգ միլիոն երեք հարյուր ինը հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

1.3. Պայմանագրով ավելացված 19 199 580 (տասնինը միլիոն մեկ հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամի մատուցվելիք ծառայությունների համար ֆինանսական միջոցները կնախատեսվեն 2021 թվականին, որի համար կկնքվի համապատասխան համաձայնագիր:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ |
| ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 | ք. Երևան, Սևաստոպոլյան 45 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 00090751 |
| Հ/Հ 900011054013 | Հ/Հ 2050022433141001 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝ | «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի տնօրեն՝ |
| Է. Գևորգյան | Մ. Մուրադյան |